

Ջիկ մը ունենայի» գրքին տպագրութիւնը, զոր գլուխն հանած է 1879 Ապրիլին: Ֆրանս-սերէն գրքին թարգմանիչն է Պետրոս Յ. Աարունի:

Միութիւնը 1879 Օգոստոսին Տնտեսական տպարանէն լոյս կը հանէ 1880ի «Օրացոյց»ը, որ ի նպատակ Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի եղած հրատարակութիւն մ'է՞ 64 շատ փոքր ծաւալով եւ աննշան բովանդակութեամբ:

22. ԳՊՐՈՅԱՍԷՐ ՀԱՅՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Օրթագրելի Հոբիսիմեան ազգական վարժարանի շրջանաւարտ քանի մը Տիկիներ ու Օրթորդներ միանալով՝ 1879 Մայիս 1ին հիմը կը դնեն Հայ իգական Մշակութային Ընկերութեան մը, որուն անունը նախագէտ կ'ըլլայ «Գարոցաւեր Հայուհեաց Ընկերութիւն» 65, իսկ յետագային կը կոչուի նաեւ «Դպրոցասէր Տիկիանց Ընկերութիւն» 66, միւս Հայ իգական, գրեթէ միեւնոյն ժամանակ կազմուած Ընկերութիւններէն զանազանուելով գլխաւորաբար իր առաջին տնտեսողը. «Դպրոցասէր...» եւ յաճախ յորջորջուելով լոկ այսպէս. «Դպրոցասէր»:

Ընկերութեան Հիմնադիրներ կը համարուին. Տիկ. Նազըր Վահան, Տիկ. Սրբուհի Տիւսաբ, Օր. Թագուհի Պալթագարեան, Օր. Նուրիկ Սիմէոնեան եւ Տիկ. Զապէլ Ֆրեւարէիան 67:

Ահա Ընկերութեան նպատակը. «Ա. Անօգնական Հայուհեաց դաստիարակութեան նպատակով, նաեւ գաւառաց վարժուի պատրաստել: Բ. Ընկերութեան նպատակը գործադրելու համար Ընկերութիւնը պիտի ջանայ մասնաւոր դպրոցներ բանալ, որոնց մէջ ձրիապէս պիտի աւանդուին Ուսմունք եւ Չեւարտեսութեան» 68:

«Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութեան» մասին հնագոյն տեղեկութիւնը ժամանակակից Մասիս թերթը կու տայ, 1879 Սեպտ. 1ին

64 Հմմտ. Մասիս, 1879, Թ. 2326:
65 Մասիս, 1879, Թ. 2416, Սեպտ. 1: — Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութիւն, Ա. Տարեկան Տեղեկագիր, Կ. Պ. 1880:
66 Հմմտ. Դպրոցասէր Տիկիանց Ընկերութիւն, Բ. Տեղեկագիր, Կ. Պ. 1881:
67 Տօքթ. Վ. Յ. Թարգման, Երեւ. Չէլէպ. եւն, Բ., էջ 676:
68 Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութիւն, Ա. Տարեկան Տեղեկագիր, Կ. Պ. 1880, էջ 11:

գրելով. «Օրթագրելի մէջ քանի մ'ազնուամիտ Հայ տիկնայք անուումն եւ անտէր մնացած Հայ ազգական ձրի կրթութիւն տալու եւ գաւառաց համար վարժուիներ պատրաստելու վսեմ խորհրդով Ընկերութիւն մը կազմած» են 69:

Ինչպէս ըսինք՝ Ընկերութեան հիմնումի պաշտօնական թուականն է 1879 Մայիս 1: Իսկ թէ ո՞վ եղած է բուն հիմնադիրը, որ յղացած է Ընկերութեան գաղափարը՝ ոչ ոք յիշած է: Այն միայն ստոյգ է թէ արդէն Հոբիսիմեան վարժարանի սեղաններուն վրայ յղացուած է գաղափարը՝ «իգական սեռին զարգացման համար վարժարան բանալու» 70: Որքան կ'երեւայ՝ Ընկերութեան կորիզը կազմողներն եղած են Օր. Նուրիկ Սիմէոնեան եւ Օր. Թագուհի Պալթագարեան 71, որոնք Ընկերութեան Ա. տարւոյ Գործադիր Ժողովի Ատենապետն ու Ատենադպիրն են: Տիկին Աւետիսեան (Անայիս) Հիմնադիրներէն մին կը համարի Օր. Թ. Պալթագարեանը, որ 1917ին ալեհեր է (Ժողովուրդի Ձանը, Կ. Պոլիս 1921, Թ. 789):

Ընկերութեան առաջին տարւոյ Անդամուհիներու ցանկին մէջ 72. սա զանազանութիւնը կը նշմարենք. 37 հոգի «Ընկերութիւն» 73 տնտեսող տակ զատ յիշուելէ վերջ՝ կը տրուի ցուցակ մը «Բաժանորդաց» 74: Այս զանազանութիւնը եղած է թերեւս մասնաճիւղ ընկու համար թէ այդ 37 «Ընկերուհիք» Ընկերութեան առաջին Անդամներն են:

Հետագրքրական է Ընկերութեան Ա. տարւոյ Վարչական կազմը, զոր կը ներկայացնենք հոս.

Դիւան Ընդհ. Ժողովի (Ա. տարի, 1879—1880)

Ատենապետ	Տիկ. Աննիկ Զայեան
Փոխ Ատենապետ	Տիկ. Բուբուլ Մեղեղի
Ատենադպիր	Օր. Լուսիկ Վասիլեան
Փոխ Ատենադպիր	Օր. Երանուհի Աշնան

69 Մասիս, 1879, Թ. 2416:
70 Բիւզանդիոն, Կ. Պ. 1904, Թ. 2326:
71 Բիւզանդիոն, անդ. — Խնդիր Սիմէոնեան (Ժամանակ, 1914, Թ. 1874) կը գրէ որ Ընկերութեան հիմնողներն եղած են «Օրթագրելի Հոբիսիմեանց վարժարանի երեք շրջանաւարտուիները», ստանց անոնց անունը տայու: Մենք առիթը երկու անուններ. Երթորդն է Արմաւենի Սահակեան (Հայաստանի Կոչակ, 1953, էջ 470):
72 Ա. Տարւոյ Տեղեկագիր, անդ՝ էջ 20—27:
73 Անդ, էջ 20:
74 Անդ, էջ 22—27:

ԳՈՐԾԱԳԻՐ ԺՈՂՈՎ.

Ատենապետ	Օր. Թագուհի Պալթագարեան
Ատենադպիր	Օր. Նուրիկ Սիմէոնեան
Գանձապետ	Տիկ. Յիւստիանէ Շաշին
Հաշուակալ	Օր. Շարլոթ Թուշուճու
Խորհրդական	Տիկ. Տիրուհի Եսայեան
"	Օր. Արուսեակ Շիշմանեան
"	Օր. Բուբուլ Զայեան

ՎԵՐԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԳԻՒԱՆԻ ԸՆԿ. ԺՈՂՈՎԻ (Ա. տարւոյ վերջը)

Ատենապետ	Տիկ. Սրբուհի Տիւսաբ
Փոխ Ատենապետ	Օր. Սոփիա Սարափեան
Ատենադպիր	Օր. Լուսիկ Վասիլեան
Փոխ Ատենադպիր	Օր. Երանուհի Աշնան 75

«Դպրոցասէր Հայուհեաց»ը իր գոյութեան առաջին տարիէն ունեցած է «Հիմնական կանոնադրութիւն» մը, բողոքացած՝ 32 Յօդուածէ, ինչպէս նաեւ «Ներքին կանոնադրութիւն մը Ընդհ. Ժողովի»՝ կազմուած 38 կէտերէ, երկուքն ալ հրատարակուած՝ Ա. Տարւոյ Տեղեկագրին մէջ (էջ 11—19):

Գաղափար մը կազմելու համար՝ յիշենք հոս քանի մը Յօդուած. Նոր ընկերութի ընդունուելու համար՝ Ընդհ. Ժողովի բուհներու մեծամասնութիւնը հարկաւոր է (Հիմն. կան. Յօդ. 1). Ամսական բաժնեգրին է 1 արկան. Յօդ. 2). Ամէն ընկերութի ծախք զուրուշ (Յօդ. 2). Ամէն ընկերութի հաւասար բուէ ունի ժողովներու մէջ (Յօդ. 3). Ընկերութեան բաժանորդ կրնան ըլլալ այրեր, բայց Ընկերութեան գործերու չեն խառնուիր (Յօդ. 8). Ընդհ. Ժողով կը գոյնաւորուի երեք ամիսը մէկ անգամ (Յօդ. 14). մարուի երեք ամիսը միամեայ է (Յօդ. 18). Գործադիր Ժողովը երկամեայ է (Յօդ. 23). Ընկերութիւնը երկու տեսակ սովորական հասոյթ ունի. բաժանորդագրին եւ նպատակ տոմսեր (Յօդ. 29):

Ընկերութիւնը մէկ տարուան մէջ 380 բաժանորդ ունեցած է: «Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութիւնը» իր ձեռնարկին մէջ յաջողութեան մեծադոյն երաշխիքն ունենալու համար՝ իր Ընդհ. Ժո-

75 Ա. Տարեկան Տեղեկագիր՝ անդ՝ էջ 20—21:

ղովի Վարչութեան կողմէ նամակ մը կը գրէ Պատրիարք Ներսէս Արքեպ. Վարժապետանի՝ խնդրելով իր օրհնութիւնը: Ս. Պատրիարքը գեղեցիկ պատասխան մը գրած է: Երկու նամակներն ալ հրատարակած է Մասիս 76, որմէ կը համոզուենք.

Ամենապատիւ Սրբազան Հայր. Դպրոցասէր Հայուհեաց ակումբ մը ազգիս օգտակար ծառայութիւն մը մատուցանելու նպատակաւ Ընկերութիւն մը կազմելով մտադիր է դպրոց մը բանալ եւ ձրիապէս գիւղէս սկսելով աղքատիկ անուումն եւ անտէր մնացեալ ազգական դաստուծութիւն ընելով նաեւ գաւառաց համար վարժարաններ պատրաստել: Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութիւնն իւր պատրաստած կանոնագրութիւն արդէն Ուսումնական խորհրդոյ ներկայացուցած ըլլալով Ձեր Սրբազնութեան հովանաւորութեանը պէտք ունի, որպէս զի կարող ըլլայ իւր նպատակը արդիւնաւորել եւ յաջողել իւր նոր ձեռնարկութեանց մէջ: Աներկրայ ըլլալով որ Ձեր Սրբազնութիւնը պիտի խրախուսէ... նաեւ մեր փափաքն ու ջանքը...

Ի գիմաց Ընդհ. Ժողովոյ Ատենապետ Աննիկ է. Զայեան Լուսիկ Վասիլեան

Ազնիւ եւ պատուական Տիկնայք Դպրոցասիրաց Հայուհեաց Ակումբին օրհնութեամբ: Գեղեցիկ եւ ազգասէր ոգով գրած գեղաշար նամակնիդ ընթերցայ. յոյժ ուրախ եմ ձեր ձեռնարկութեան վրայ, զի շատ օգտակար է նպատակնիդ. վարժուհիներ պատրաստել գաւառաց համար, պարկեշտ եւ գիտուն վարժուհիներ՝ որոց մեծ պէտք ունի ազգը եւ զորս ամէն կողմերէ կը փնտոնն այս օրերս... եւ պատրաստ եմ խոփսանն աջակօրբերս... եւ պատրաստ եմ խոփսանն աջակօրբերս... եւ պատրաստ եմ խոփսանն աջակօրբերս... Անոնց բարի օրինակը Ձեր անձանց վրայ ցուցնելով՝ կ'արդիւնաւորէք անոնց ձեռք սերմանուած սերմունքն... Օրհնեալ քրտունք արգասաբերք, օրհնեալ ձեռք ազգասէր մշակուհեացդ, ջանացէք միշտ, Ձեր

76 Մասիս, 1879, Թ. 2416:

վաստակոց արդիւնքը Ձեր աչքով պիտի տեսնէք... Երբ ընտանեկան առաքինութիւնը, երբ իզական սեռին կրթութիւնը զարգանայ ազգի մը մէջ, այն ազգը ճշմարտագէտ կը յառաջադիմէ... Կը մաղթեմ հոգևով եւ սրտիւ որ իմաստութիւնը Հօր Յիսուս եւ Անոր օրհնարանեալ Մայրն՝ Ծաղիկն անթառամ առաքինութեան եւ Հայաստանեայց աստուծոնքն ամենալոյս եւ ամենաշնորհ կուսանքն անրիժ Հոբիսիմեանք՝ որոց հովանաւորութեամբ ծաղկեցայք Դուք, հովանի եւ օգնական եւ պահապան ըլլան Ձեզ: Այսօր թարար

Պատրիարք Կ. Պոլսոյ
Ներսէս Արքեպիսկ.
1879 Օգոստ. 20
ի Պատրիարքն Հայոց
ի Կ. Պոլիս

Ընկերութեան մնայուն, սովորական նիւթական ազդիւնը էր, ինչպէս տեսնեք, իր բաժանորդագրիներն ու նուիրատուները: Այս պատճառաւ ստիպուած էր կամաւոր ուրիշ ազդիւններ ալ որոնել: Ընկերութիւնը կազմակերպած է պարահանգէս եւ վիճակահանութիւն. կազմած է Տիկնանց Մասնախումբ մը Կէտիկ Փաշայի մէջ, որ բացած է Լսարան մը՝ սարքելու համար հանգէս եւ բանաստեղծութիւն՝ ի նարստ Ընկերութեան: Մասնախումբի կազմը հետեւեալն է՝:

- | | |
|-----------------------|---------------|
| Տիկ. Նոյեմզար Ծահարաչ | Ատենապետ |
| Օր. Արմաւենի Սահակեան | Ատենազպիր |
| Տիկ. Ազաւնի Փանոսեան | Գանձապետ |
| Օր. Բերուզ Միգանձեան | Հաշուակալ |
| Տիկ. Հոբիսիմէ Արամեան | Խորհրդակցական |
| Տիկ. Վերդինէ Պարեան | Խորհրդակցական |
| Տիկ. Արիք Բարամանեան | Խորհրդակցական |

Դպրոցասէր Հայուհեացը, որ առաջ իւր գլխաւոր նպատակին հասնելու համար, 1879 Նոյ. 5ին Օրթագիւղի փոքրիկ տան մը մէջ կը բանայ իւր անդրանիկ վարժարանը, որուն ուսուցիչներն ու դաստիարակները կ'ըլլան Ընկերութեան քանի մը անդամուհի Օրթորգներ⁷⁸: Հայ թերթ մը կը գրէ «Դպրոցասէր» ի առաջին այս դպրոցի մասին. «Երեք ամիս չանցած՝ 1000 գրուշ հաւաքելով՝ գիւղին հեռաւոր մէկ անկիւնը խարխուլ տուն մը

⁷⁷ Ա. Տարոյ Տեղեկագիր, անդ՝ էջ 21:
⁷⁸ Անդ՝ էջ 6:

կը վարձեն իրրեւ դպրոց, ուր իրենք՝ օրինորդները՝ կ'երթան դասախօսել ու կառավարչութիւնը ընել կարգով»⁷⁹:

Դպրոցի բացումը կ'ըլլայ 20 աշակերտուհիով, բայց քիչ ետքը երբ Ընկերութիւնը պարահանգէս տալով աւելի միջոց կ'ունենայ՝ հարկ կը դատէ դպրոցը աւելի յարմար տուն մը փոխադրել, չհեռանալով Օրթագիւղէն, ուր կը գտնուէին Ընկերութեան մեծագոյն թուով անդամները: Փոխադրութիւնը կ'ըլլայ 1880 Մայիսին եւ դպրոցը կ'ունենայ 35 աշակերտուհի, երկու մնայուն ուսուցիչով եւ մէկ վարժուհիով⁸⁰:

Դպրոցի բացումին առթիւ Ընկերութեան Գործադիր Ժողովը Ս. Պատրիարքին օրհնութիւնը խնդրած էր նամակով մը, որուն նամակով մը պատասխանելով՝ կ'ըսէ Ներսէս Արքեպ. Վարժապետեան. «Ուրախութեամբ իմացայ Ձեր Հոկտ. 27 ամսաթիւ նամակէն որ այս Նոյեմբ. 5ին Ձեր առաջին վարժարանը կը բանայք, եթէ զրադեալ չլինէի՝ անձամբ պիտի գայի օրհնել Ձեր ազգօգուտ ձեռնարկութիւնը: Աստուծոյ պաշտպանութիւնը եւ անոր անկողնի օրհնութիւնները կը հայցեմ Ձեր առաջին դպրոցին վրայ եւ կը մաղթեմ որ մշտապէս եւ բարգաւաճ լինի...»⁸¹:

1879 Նոյեմբ. 5ի դպրոցի բացումը կատարած է թաղին Առաջնորդ Յակոբ Վ. Աշոտ եւ այդ առթիւ եղած են նուիրատուութիւններ: Այս մասին Գործադիր Ժողովը Նոյեմբ. 23ին Մասիսի մէջ հրատարակած իր շնորհակալիքին մէջ կու տայ մանրամասնութիւններ. «Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութիւնն ուրախութեամբ կը փութայ ծանուցանել որ ի շնորհս այն վեհանձն բարերարաց, որք նպատակցին իւր ձեռնարկութեան, յաջողած է մասամբ իւր իւր նպատակին գործադրութեան սկսիլ եւ իւր առաջին վարժարանը բանալ յՕրթագիւղ ամսոյս 5ին օրհնութեամբ Յակոբ վարդապետի Աշոտ եւ ներկայութեամբ պատուաւոր ընտանեաց, եւ այսօր քսանի չարի աղքատիկ աշակերտուհիներ իրենց աւանդուած ուսմանց հետ կ'ուսնին նաեւ հայրենեաց օգտակար գաւակներ ըլլալ: Այս առթիւ

⁷⁹ Արեւիլի, 1895, թ. 3351: — Այդ տնակը կը գտնուէր Օրթագիւղի վերջին սահմանը կազմող Կեօզեանց տանը քով (ժամանակ, 1914, թ. 1874):
⁸⁰ Ա. Տեղեկագիր, անդ՝ էջ 6: — Արեւիլի, անդ: — Միսոյ է Փոսիջի (1880, թ. 1503) գրածը թէ Դպրոցասէր Հայուհեացը «սկսել է յատուկ շէնք մը կառուցանել»:
⁸¹ Մասիս, 1879, թ. 2469:

Ընկերութիւնն իւր խորին շնորհակալիքն կը յայտնէ այն ամէն ազգասէր անձանց, որք մերկ դպրոցը կահաւորեցին եւ աշակերտուհեաց լաւ պատասխանելուն ամէն տեսակ խնամք տարին: Մասնաւորապէս առ հոգաբարձութիւնն թարգմանչաց վարժարանին, որ պէտք էր քան զբաւեղանքները նուիրեց եւ Միհրան Էփէնտի Միքայէլի, որ տղայոց ներմակեղեններն ըստ կարի հոգաց, եւ առ այլ բարերար անձ մը, որ դպրոցին անմիջական պէտքերուն համար քուլղք, գրիչ, մելան եւ այլն առատօրէն նուիրեց: Քանի՜ քաղցր է մեզ տեսնել որ մեր ազգին մէջ եւս կը տեսնուին այսպիսի ազնիւ օրինակներ ի խրախոյս ուսումնասէր Ընկերութեանց եւ ի յառաջադիմութիւնն ազգիս... ի դիմաց Գործադիր Ժողովոյ Ատենապետ՝ Թագուհի Ղ. Պալթագարեան, Ատենազպիր՝ Նուրիկ Սիմէոնեան»⁸²:

Դպրոցասէրի վարժարանին Ուսումնական ծրագիրը ունեցած է 2 տարուան նախապատրաստական շրջան եւ 5 տարուան նախակրթարանի կարգեր: Վերջիններու մէջ աւանդուած ուսման առարկաներն են՝ Հայերէն, կրօնագիտութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, գաղղիերէն, թուարանութիւն, բնական գիտութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն, ասեղնագործութիւն եւ կարուծել⁸³:

Ընկերութիւնը իր վարժարանին համար 5 Յօդուածով կազմուած յատուկ կանոնագրութիւն մ'ունի եւ «Դաշնագիր» մը է «Պայման»ներով, որոնք հրատարակուած են Ա. Տեղեկագրին մէջ (էջ 8—10):

Ընկերութեան Պատուոյ Նախագահութիւնը յանձն առած էր Ներսէս Պատրիարք Վարժապետեան, որմէ վերջ Նոյնը շարունակած է նաեւ իր յաջորդը՝ Յարութիւն Արքեպ. Վեհապետեան⁸⁴: Ընկերութիւնը կ'ընդունի նաեւ կաթողիկոսական կոնդակ եւ օրհնութիւն⁸⁵:

Ընկերութիւնը իր նիւթական հասոյթը աւելցնելու համար Պոլսոյ թաղերէն Պէշիկթաշի մէջ ալ Օթանդակ Մասնաճիւղ մը կը կազմէ 1880—1881 շրջանին⁸⁶: 1882ին Բե-

⁸² Անդ՝ թ. 2488:
⁸³ Ա. Տեղեկագիր, էջ 10, «Ուսումնական Յայտագիր»:
⁸⁴ Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւն, Բ. Տեղեկագիր, Կ. Պ. 1881, էջ 5: — Հայրենիք, Կ. Պ. 1886, թ. 2045:
⁸⁵ Մասիս, 1879, թ. 2492:
⁸⁶ Բ. Տեղեկագիր, անդ՝ էջ 9:

րայի մէջ հայ նկարիչներու եւ արձանագործներու կողմէ գեղարուեստական ցուցահանգէս մը կը կազմակերպուի ի նպաստ Ընկերութեան: Կը մասնակցին. Այլագոյսի, Ոսկան, Էնքեքճեան, Աճէմեան, Մինանեան, Տամատեան, Նշանեան, Սաքըզեան, Սրապեան, Աստուածատուրեան, Ծաշեան, Չօպանեան, Օր. Սերվիչէն, եւ այլն⁸⁷:

Դպրոցասէր Հայուհեացը 1880—1881ի շրջանին իր վարժարանին մէջ կ'ընդունի 5 դասուցի գիշերօթիկ աշակերտուհի Վանէն, Ակիէն, Կեսարիայէն եւ Կէյվէյէն, որոնց միացած 40ի մօտ պոլսեցի ցերեկեաներ՝ վարժարանը կ'ունենայ 45 աշակերտուհի⁸⁸:

Ընկերութեան օգտաշատ գործունէութեան լուրը հետուններն իսկ լսուած ըլլալով՝ նպաստներ կը հասնին Կարնէն, Տիգրիսէն եւ Մանչեսթըրէն⁸⁹: Կ'ըլլան նաեւ գրքերու եւ զանազան նիւթերու նուիրատուութիւններ⁹⁰: 1881—1882ի Ընկերութեան Պատուոյ Անդամներու մէջ կը կարգանք սահմանները. Յովհ. Այլագոյսի, Գրիգոր Չիլինկիրեան, Համբարձում Իրէքճեան, Յարոյ, ինչպէս նաեւ Տիկնաներ՝ Երանուհի Թագուր փաշա, Լուսիա Ծապուպոֆ, Մարիամ Խորասանճեան, Կիւլա Չիլինկիրեան, Նոյեմի Գափամճեան (Մեծն Նուպար փաշայի դուստր), Սրբուհի Տիւսար Պէյ եւ Լէտի Ստրանկֆորտ⁹¹: Ընկերութեան սկզբնական շրջաններուն մեծ ծառայութիւն մատուցած եւ երախտագէտ գգածուհիներով կը յիշուին Տիկ. Տիրուհի Նայեան, Օր. Արուսեակ Եիշմանեան, Օր. Վերոն Մերիամեթեան եւ մանաւանդ Տիկ. Նազը Վահան, մայր Տիկ. Սրբուհի Տիւսարի:

Հայրենիք թերթը 1882ի Հայ Ժողովուրդի անթիթար կացութեան մէջ միութարական եւ սփոփիչ կէտ մը կը դանէր «Միացեալ»ի, «Դպրոցասէր Տիկնանց»ի եւ «Ազգանուէր Հայուհեաց»ի գոյութիւնը⁹²: Նոյն թերթը 1886ին «Դպրոցասէր»ի մէկ հանգէսին առթիւ խանդավառ տողեր կը նուիրէր Ընկերութեան, ըսելով թէ մինչ այրեր չկըր-

⁸⁷ Հայրենիք, 1882, թ. 928:
⁸⁸ Բ. Տեղեկագիր, էջ 6:
⁸⁹ Ա. Տեղեկագիր, էջ 5: — Բ. Տեղեկագիր, էջ 37—40:
⁹⁰ Բ. Տեղեկագիր, էջ 42—46:
⁹¹ Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւն, Գ. Տեղեկագիր, Կ. Պ. 1882, էջ 17:
⁹² Հայրենիք, 1882, թ. 917:

ցան ունենալ իրենց «վարժապետանոցը»⁹³ Դպրոցասէրը վարժուհիներ կը հասցնէ եւ արդէն բաւական թուով վարժուհիներ հայկական գաւառներ զրկած է⁹⁴ :

Գաղափար մը տարու համար թէ Դպրոցասէր Հայուհեացը երկու տարուան ընթացքին ինչ մուտք եւ ելք ունեցած է՝ յառաջ կը բերենք 1881 Յուլիս 31ին հրատարակուած Հաշուեկշիռին արդիւնքը, ուր կը տեսնուի որ երկու տարուան մէջ — 1879—1881 — Ընկերութիւնը ունեցած է Մուտք 85,426 դուրուշ եւ Ելք 47,171 դուրուշ⁹⁵, երբ ան ունէր 5 ձրի գիշերօթիկ աշակերտուհի:

Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութիւնը 10 տարի կը շարունակէ այսպէս իր եռանդուն գործունէութիւնը: 1889ին վարժարանը կը փոխադրէ Պոլսոյ հայաշատ թաղերէն մին — Գուլգափու — եւ նոյն տարուայ Մայիս 2ին նոր շէնքի մէջ կը տօնէ իր տասնամեակը — 1879—1889: Հանդիսին կը նախագահէ Խորէն Արքեպ. Նարպէյ: Նուազերգով մը բացումը ընելէ վերջ՝ վարժարանի բարձրագոյն կարգէն Օր. Էլէնու Պալթագարեան ուղերձով շնորհակալութիւն կը յայտնէ Ընկերութեան մեղուաջան անդամներուն. աշակերտուհիք կ'արտասանեն եւ դպրոցական կեանքէ սիրուն խաղ մը կը ներկայացնեն. կը խօսի Յակոբ Գուրգէն. փակուած իր խօսքին մէջ Նախագահ Սրբազանը ուրախութիւն կը յայտնէ որ Ընկերութիւնը իր վարժարանը փոխադրած է թաղ մը (Գուլգափու), ուր ամէնէն աւելի կը գգացուէր հայ աղջկանց վարժարանի մը պէտքը: Հանդիսի վերջաւորութեան թաղին «Նպաստամատոյց Ընկերութիւն»ը 1000 դուրուշի նուիրատուութիւն մը կ'ընէ Դպրոցասէրին՝ խոստանալով ուրիշ նուէրներ ալ⁹⁶:

1890ին Յակոբ Գուրգէն կը պատմէ. «Իբր տասն եւ մէկ տարի առաջ, 1879 Յունիս* 17ին, ազգ. խմբագրապետի մը հետ գնացինք այցելել Ընկերութեանս (Դպրոցասէր Տիկնանց) նորահաստատ դպրոցին, որ պարզապէս տնակ մ'էր, յունական թաղի մը մէջ, յՕրթաքէօյ: Տասն կամ տասնեւհինգ

⁹³ Վանի «Վարժապետանոց»ը իր հիմնումէն քիչ վերջ փակուած էր:
⁹⁴ Հայրենիք, 1886, թ. 2117:
⁹⁵ Մայիս, 1881, թ. 2994:
⁹⁶ Արեւիկ, 1889, թ. 1598:
* Միայն է Յունիսը, պէտք է ըլլալ նոյնիմաստ Թողումագիր:

աշակերտուհիք, աղքատաց զաւակունք, նրատած էին աններկ գրասեղանաց վրայ, եւ ազնիւ տիկնայք ոմանք եւ օրիորդք բարետուհիք՝ գորովալից խանդաղատանօք որպէս թէ դուրգուրալով որրոց եւ թշուառաց վրայ՝ կը պատմէին մեզ թէ ինչ նպատակաւ կազմած են Ընկերութիւնն, հաստատած են վարժարանն. թէ ինքեանք իսկ կը դասախօսեն ի սկզբան անդ, եւ յանձն առած են ամէն աշխատութիւն՝ յատուկ խնամով պատրաստելու՝ այն մատղաշ աղջիկներն իբրեւ վարժուհի գաւառական դպրոցաց: Ճշմարտն ըսեմ. — զմայրամբ հանդերձ թերահաւատեցանք սակաւիկ: Այն տնակն, այն փոքրիկ աղջկունք, եւ հայարնակ գաւառաց համար վարժուհի՝

«Սակայն յօրէ անտի եւ այսր անցան դրեթէ տասն եւ մէկ տարիներ, եւ Ընկերութիւնն՝ տակաւ բարգաւաճ եւ արդիւնաւոր՝ կանգուն է այսօր: Տասնէն աւելի գաւառական վարժարանաց մէջ յաջողութեամբ կը պաշտօնավարեն այսօր՝ իբրեւ վարժուհի նախադրութեան՝ Դպրոցասիրաց սանուհիք, տանելով իրենց հետ, մինչեւ ի Քղի եւ ի Մուշ, ընտիր ընտիր բարեմասնութիւններ, որոց հայելի ու տիպար եղած են տիկնայք եւ օրիորդք Ընկերութեան. անտաղիւտ բարք, համեստութիւն, հաստատուն կրթութիւն եւ աշխատասիրութեան ոգի... Ոչ ոք հետեւապէս պիտի վարանի յայսմ մասին առաջնութեան պատիւն ընծայել Դպրոցասէր Ընկերութեան, որ զառաջինն խորհեցաւ գաւառաց համար վարժուհի պատրաստելու հարկն. խորհեցաւ, աշխատեցաւ եւ ի գլուխ հանեց...»⁹⁷:

1892ին, իր 12րդ շրջանը բոլորելուն առթիւ, Դպրոցասէր Հայուհեացը կ'ընէ հետեւալ տեղեկատուութիւնը. Ընկերութեան վարժարանը ունի 110 աշակերտուհի, որոնց 60ը ձրի, 12ը գիշերօթիկ են: Ընկերութիւնը 12 տարուան մէջ հասցուցած է 22 վարժուհի, որոնք գործած են ու կը գործեն Հայաստանի եւ հայաշատ վայրերու մէջ⁹⁸: Հայ թերթ մը կը գրէ. «Ընկերութիւնը իւր սանուհեաց գաւառներու մէջ ունեցած յաջողութիւնը կը պարտի այն բարոյական եւ տոկուն դաստիարակութեան, որուն մասնաւոր խնամք կը

⁹⁷ Արեւիկ, 1890, թ. 1802:
⁹⁸ Տէ՛ս Հայրենիք, Կ. Պ. 1892, թ. 175 անունները այդ վարժուհիներուն եւ անոնց գործած վայրերուն:

տարուի, որով կը դիւրանայ անոնց համար գաւառներու շարքաշ կեանքը»⁹⁹:

1893ին Պոլսոյ Ծաղիկ¹⁰⁰ կը գրէ որ Հայաստանի դպրոցները նոր վարժուհիներ կ'ուզեն Դպրոցասէր Տիկնանց Ընկերութեանէն:

1895ին 26 վարժուհիներ տուած է Ընկերութիւնը¹:

1895—1896ի դէպքերէն վերջ եւ անոնց հետեւանքով կը դադրի պահ մը Դպրոցասէրը գործելէ²:

1899ին գովեստի դեղեցիկ խօսքերով վերահանելէ վերջ Դպրոցասէրի արժէքը եւ տուած արդիւնքը՝ Յ. Ք. Հինդլեան՝ ցաւ կը յայտնէ անոր դպրոցին դադարման վրայ³:

1904ին ձիգ կը թափուի կանգնելու Ընկերութիւնը եւ բանալու վարժուհիները⁴:

1908 Օգոստ. 25ին կոչ կ'ընէ Սրբուհի Ս. Սիմոնովիչ Ընկերութիւնը վերակազմելու եւ գործունէութեան⁵:

1908 Սեպտ. 12—25ին վերակազմուած է արդէն Ընկերութիւնը եւ կը հրատարակէ հետեւալ Յայտարարութիւնը. «Գաւառական վարժարաններու ուսուցչուհի պատրաստելու նպատակով 1879 թուականին հաստատուած Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւնը 17 տարի շարունակուելէ յետոյ 1896ին դադրեցաւ գոյութենէ դժբախտ պարագաներու բերմամբ եւ երկրին աննպաստ վիճակներուն հետեւանօք: Այժմ երբ երկրին մէջ կրթական եւ բարեգործական մարմիններ վերստին կը կազմակերպուին կարելոր պէտք մը նկատուած է վերակազմել Դպրոցասէր Տիկն. Ընկերութիւնը, միեւնոյն նպատակով վաղեմի անդամներէ, նախկին ընթացաւարտներէ եւ կրթասէր տիկիներէ եւ օրիորդներէ, որոնք ազնուարար եղած միացած են այս նպատակին շուրջը: Ընկերութեան անդամուհիները պարք կը համարին դիմել Պոլսոյ եւ գաւառներու մէջ գտնուող բոլոր ուսումնասէր տիկիներու եւ օրիորդներու, որպէս զի աղքատ եւ անոք աղջիկներ դաստիարակելով գաւառաց ուսուցչուհի պատրաստելու գործին համար նուիրեն իրենց աջակցութիւնը բաժա-

⁹⁹ Հայրենիք, անդ:
¹⁰⁰ Ծաղիկ, Կ. Պ. 1893, էջ 71:
¹ Արեւիկ, 1895, թ. 3351:
² Հմմտ. Բիւզանդիոն, Կ. Պ. 1899, թ. 742: — նոյն՝ 1904, թ. 2321:
³ Բիւզանդիոն, 1899, թ. 782:
⁴ Անդ՝ 1904, թ. 2326:
⁵ Արեւիկ, Կ. Պ. 1908, թ. 62:

նորդուելով Ընկերութեան եւ ամսական իւրաքանչիւր բաժինի համար 40 փր. վճարելով...
Ի դիմաց Ընդհանուր Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Ե. Վ. Օրմանեան Ե. Աւետիսեան⁶

Ընկերութեան Գ. Ընդհ. Ժողովքին (1908 Հոկտ. 21) նախագահելով Իզմիրլեան Սրբազան՝ բուռն եռանդ կը ներշնչէ բոլորին միաճուելու դարձեալ ազգաշէն գործունէութեան: Այդ առթիւ նոր անդամուհիները կ'արձանագրուին, ինչպէս՝ Տիկ. Վերգիէն Ա. Ֆընտաբլեան, Տիկ. Արշակուհի Կեսարեան, եւ այլն⁷:

1909 Յուլիսին Բիւզանդիոն⁸ կ'աւետէ որ Ընկերութեան անդամները նոր աւելնով գործի կը լծուին եւ շուտով կը բանան իրենց վարժարանը: Նոյն տարուայ Ատանայի եղենը կը փութացնէ վարժարանին բացումը, ուր 30 որրուհիներ կը հիւրընկալուին ապագայ վարժուհիներ պատրաստելու ծրագրով⁹:

Վարժարանը կը բացուի Գուլգափուի մէջ, ուր էր արդէն երկար տունէ ի վեր եւ ինչպէս միշտ՝ այս անգամ ալ վարձքով:

1909 Դեկտ. 22ին վարժարանը կ'անցնէ ծանր տագնապ մը: Մինչ Դպրոցի տեսչուհին դպրոցական աշխատանքներով զբաղած էր՝ անակնկալ այցելութիւնը կ'ընդունի կառավարական բարապանի մը, որ պաշտօնագիր մը կը ներկայացնէ, որուն մէջ Մէարիֆի Նախարարութեան կողմէ կը ծանուցուէր թէ, եթէ դպրոցի բացումին համար հարկաւոր եղած պետական արտօնութիւնը չկարենայ ցուցնել՝ աշակերտները պիտի ցրուեն եւ դպրոցը փակուի: Տեսչուհին ամիջապէս Պատրիարքարան կը դիմէ, ուր տօնի պատճառաւ զոց ըլլալուն՝ Համբարձում Պոլսեանի (Մուրատ), որ հոն կը գտնուէր՝ կը յայտնէ եղելութիւնը: Մուրատ կը դիմէ Կրթական Նախարարութեան, Բարձ. Գուռ եւ Ներքին Գործոց Նախարարութեան եւ կը յաջողի յետաձգել տալ դպրոցի փակումը, մինչեւ պաշտօնական գործողութիւններու լրացումը¹⁰:

Ընկերութիւնը կը խորհի սեպհական շէնք մ'ունենալու հնարաւորութիւններու վրայ:

⁶ Արեւիկ, 1908, թ. 88:
⁷ Անդ՝ թ. 112:
⁸ թ. 2865:
⁹ Հայրենիք, 1909, թ. 1526:
¹⁰ Ժամանակ, Կ. Պ. 1909, թ. 354:

Փոքրիկ գումար մ'ալ կայ, յատկապէս տրամադրուած այդ նպատակով¹¹:

1910ին Ընկերութիւնը իր հին ծրագրին համեմատ կը ձգտի մէկ կողմէ դաստիարակել իրեն յանձնուած փոքրիկ հայուհիները, միւս կողմէ պատրաստել անոնցմէ վարժուհիներ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ Գաւառներու համար: Յատուկ օրհնութեան թուղթով մը կը դուրս ելնէ իր արտադրած Պատրիարք Եղիշէ Արքեպ. Գաւառեան Ընկերութեան ժիր գործունէութիւնը¹²:

1911ին վարժարանի շէնքը կը նորոգուի 80,000 զուրուշով¹³: 1911 Հոկտ. 19ին կը կազմուի Բերայի մէջ «Կարոցասէր Տիկնաց Ծմանդակ Օրիորդաց Միութիւն»ը, նպատակ ունենալով օժանդակել Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութեան¹⁴:

Հ. Բ. Լ. Մ. ր ինչպէս «Միացեալ»ին 300 ոսկի կապած էր՝ Դպրոցասէր Հայուհեացին ալ տարեկան 70 անդրիական ոսկի նպաստ մը կապած ըլլալով՝ 1913ին կը վճարէ այդ գումարը¹⁵:

1914 Յունիս 29ին Դպրոցասէր վարժարանը կ'ունենայ իր ամալերջի հանդէսը, որուն կը նախագահէ Ս. Պատրիարքը. հայերէն, թրքերէն ու Ֆրանսերէն մեներգներէ եւ խմբերգներէ վերջ՝ Տնօրէնուհի Տիկ. Սարուխան կը բաժնէ 24 շրջանաւարտուհիներու վկայականները: Հուսկ բանքի իր խօսքին մէջ Գանիէլ վարուժան գեղեցկօրէն կը պարզէ այն դերը, որ շրջանաւարտուհիները պիտի ունենան առաջիկայ իրենց կեանքին մէջ: Ահա անունները շրջանաւարտուհիներուն. Օրիորդներ՝ Արշալոյս Ծոռնճեան, Մանի Պատիկեան, Հայկուհի Ճամճեան, Բրիտանիէ Պարոնեան, Պերճուհի Գասպարեան, Աղաւեի Բրիտանիորեան, Մանի Պարոնեան, Արմինէ Սամանճեան, Անգինէ Փափաղեան, Զարուհի Գանթարճեան, Վերժին Միրիճեան, Հոնիփաթէ Գազանճեան, Փայլինէ Պոզոսեան, Մանի Գազաղեան, Ռերեկա Միւսիւսեան, Հոնիփաթէ Տէմիրճեան, Վարդանայ Սէլմեան, Սրբուհի Թումայեան, Արաքսի Կէմճեան, Հերմինէ Թահթաճեան, Պայծառ Թէրզեան, Վարանդին Արքայեան, Հայկուհի Վազարոսեան, Իզար Պետրոսեան¹⁶:

1915 Մայիս 1ին Ընկերութիւնը իր գոյութեան 36րդ տարեդարձը կը ամօնէ Պոլսոյ մէջ, հոգեհանգիստ կատարել տալով հիմնադիրներու յիշատակին¹⁷:

Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքին վարժուհիները գէշ աղէկ կը շարունակուի (տե՛ս Ժողովուրդի Ջայնը, Կ. Պ. 1921, թ. 789): Իսկ գինադարին Ընկերութիւնը դարձեալ կը կազմակերպուի: 1918ին իր Դիւանը կը կազմէ հետեւեալ կերպով.

Տիկ. Մ. Մանուկեան	Ատենապետ
Տիկ. Գ. Սերփիզէն	Փոխ-Ատենապետ
Տիկ. Մ. Պարսամեան	Ատենադպիր
Տիկ. Պ. Սորասանճեան	Գանձապետ
Վարչական Ժողով.	
Տիկ. Մ. Պոյաճեան	Ատենապետ
Տիկ. Գ. Սորասանճեան	Ատենադպիր
Տիկ. Է. Ռուբէն	Հաշուակալ
Օր. Տիրուհի Մուրատեան	Բ. Հաշուակալ

Սորհրդականներ. Տիկիններ՝ Աւետիսեան, Ճէլալ, Դոկտ. Պահճէպանեան, Մինասեան, Դոկտ. Նազարեան Պէյ, Գայէնտէրեան, Պահրի, Ծընտրելեան, Նաւասարդեան, Լիմոնճեան, Օրիորդներ՝ Պայթաղարեան, Գալաֆեան եւ Աճառեան:

Միաձայնութեամբ կ'որոշուի Որբանոց մը բանալ՝ հիւրընկալելու համար 100—200 որբեր: Այս գործին յաջողութեան համար Տիկ. Գայէնտէրեան կը նուիրէ ազամանագարդ մատանի մը՝ վիճակահանութեան գնելու համար¹⁸:

Ընկերութիւնը Մոնս. Դոլչիէն Որբանոցի յարմար շէնք մը խնդրած ըլլալով՝ Մոնս. Դոլչիէ Կէտիկ Փաշայի Փրանսական վարժարանի շէնքը կը տրամադրէ¹⁹, որուն վրայ Ընկերութիւնը հրապարակով ալ իր խորին շնորհակալքը կը յայտնէ թէ՛ Մոնս. Դոլչիէին եւ թէ՛ Գատրգիւղի Ս. Լեւոն եկեղեցոյ Մեծաւոր Անտոն վ. ի, որ նոյնպէս շէնք մը տրամադրած էր Գատրգիւղի մէջ²⁰:

Որբանոցի բացման հանդէսը տեղի կ'ունենայ 1919 Մարտ 30ին, նախագահութեամբ Զաւէն Պատրիարքի: Մոնս. Դոլչիէի մուտքը որուն ծափահարութեամբ կ'ընդունուի: Կը խօսի Ս. Պատրիարքը: Ընկերութեան կողմէ շնորհակալութիւն կը յայտնուի Մոնս. Դոլչիէի եւ ուրիշ բարերարներու: Հանդէսէն վերջ

17 Բիւզանդիոն, 1915, թ. 5649:
18 Ժամանակ, 1918, թ. 3378:
19 Անդ, թ. 3380:
20 Անդ, թ. 3394:

11 Հայրենիք, 1909, թ. 1526:
12 Անդ, 1910, թ. 1639:
13 Ժամանակ, 1911, թ. 936:
14 Օշական, Կ. Պ. 1914 (էտեւր):
15 Ժամանակ, 1913, թ. 1459:
16 Ժամանակ, 1914, թ. 1856:

հիւրերը կը պատուասիրուին թէյասեղանով²¹:

Որբանոցի մէջ կը պատասպարուին 250 որբեր (Ժողովուրդի Ջայնը, թ. 789):

1919 Օգոստ. ի սկիզբը վարժուհիները կ'արոցը կը փոխադրուի Բերայի կից թաղերէն Նշան-Թաշի մէջ, էմին էՖ. փողոցը եւ 1919—1920ի դպրոցաշրջանին համար վարժարանը կ'ունենայ 1 նախապատրաստական եւ 3 լրացուցիչ կարգեր՝ անօրէնութեամբ Գէորգեանի²²:

1919 Մայիսին կազմուած էր «Դպրոցասէրի Ծրջանաւարտից Միութիւն»ը՝ նպատակը համար Մայր-Ընկերութեան. 1919 Յունիսին նուագահանգիստ մը կու տայ ի նպատակ վարժուհիներին եւ 1920 Փետր. ին հանդէս մը՝ ի նպատակ Որբանոցին²³:

Կրթասէր անձ մը 1920ին 3000 ոսկի կը կտակէ Դպրոցասէրի վարժարանին²⁴:

1921ին վարժուհիները փոխադրուած կը գտնենք Գատրգիւղ, Մոսա Ճատտէսի ԱրեՖ փաշա Գոնար (Ժողովուրդի Ջայնը, 1922, թ. 1161): 1921 Նոյեմբ. ի սկիզբը Գատրգիւղի վարժարանը կու գայ Հօկի նախագահ Յովհ. Թումանեան, որ ուղերձ մ'ընելով կ'ըսէ. «Ազգ մը, որ այս տեսակ հաստատութիւններ ունի՝ սուրով ու թուրով չի մեռնիր» (Ժողովուրդի Ջայնը, անդ, թ. 946):

Դպրոցասէրի վարժարանը երկու անգամ հրկէհուած է Ընկերութիւնը ճշմարտանշուցուցած է սեպհական շէնքի մը պակասէն: 1921ին այրող հարց մըն էր սեպհական շէնքի խնդիրը: Վարչական Ժողովի Ատենապետուհի Տիկ. Ակիլիյիէ Մուրատ Պոյաճեան եւ Տիկ. Մանիկի Խօհասարեան հանգանակութեան համար Ամերիկա կը մեկնին եւ տարուան մը ջանքերէ վերջ՝ 1922 Ապրիլին 30,000 դոլարի պաշարով մը կը վերադառնան²⁵: 1922ի Իզմիրի ազէտը եւ ուրիշ պարագաներ կը պարտադրեն ծրագրի փոփոխութիւն: Որբերը կը յանձնուին Ռըլիֆի, Պատրիարքարանի որոշումով, եւ կը փոխադրուին Յունաստան (Սերանիկ), ուր մեկնած էին նաեւ Ընկերութեան անդամուհիներ: Սերանիկի մէջ կը բացուի վարժարանը նախաձեռնութեամբ Օր. Պայթաղարի եւ Տիկ. Պոյաճեանի:

21 Ժամանակ, 1919, թ. 3482, 3484:
22 Անդ, թ. 3590:
23 Անդ, թ. 3535, 3745:
24 Ժողովուրդի Ջայնը, 1920, թ. 655:
25 Թէոփիկ. Ամէն. Տարեց. 1923. էջ 384—385:
— Հայաստանի Կոչնակ, Նիւ Եորք 1953, էջ 470:

1925ին, Խնամակալութեան որոշումով, Ամերիկա հանգանակուած դրամէն 20,000 դոլար կը զրկուի Սովետական Հայաստանի Կառավարութեան՝ Երեւանի մէջ աղջկանց վարժարան մը շինելու համար Դպրոցասէրի անուամբ, որ յետոյ կը կոչուի Երեւանի (Հայաստանի Կոչնակ, 1953, էջ 470):

Սերանիկի մալարիայի համաձայնագրը կը ստիպէ հեռանալ անկէ. դպրոցը կը փոխադրուի Մարսէլ, ուր կը մնայ չորս տարի եւ անկէ ալ Պարիսի արուարձանը՝ Ռէնսի, ուր կը հաստատուի վերջնականապէս: Հոս կը կազմուի նոր վարչական ժողով մը՝ Ատենապետութեամբ Տիկ. Եւփիլէ Աւետիսեանի (Անայեա) ²⁶:

Դպրոցասէրը յաւէտ երախտագէտ պիտի մնայ, իր բարերարներու կարգին, Տիգրան Խան Բէլէկեանի, որ արդիական յարմարութիւններով շէնք մը գնելով կը նուիրէ Ընկերութեան եւ Արմենակ Համբարձումեանի, որ զայն կ'օժտէ կենդրոնական ջեռուցումով²⁷:

Յովհ. Գ. Թէլեան, Պարիսի «Այսօր»ի մէջ (1952, թ. 553): մանրամասնութիւններ կու տայ 1932—1937 տեղի ունեցած դէպքերու մասին, որմէ կ'իմանանք թէ Դպրոցասէրի ներկայ շէնքը Քէլէկեան Հ. Բ. Լ. Մ. նուիրած՝ եւ Միութիւնն ալ Դպրոցասէրին յատկացուցած է: Ատկէ զատ 1937ին Հ. Բ. Լ. Մ. ր կը ստանձնէ Դպրոցասէրի Խնամակալութիւնը՝ Յովհ. Գ. Թէլեանի միջնորդութեամբ:

1932ին ստանուած է Դպրոցասէրի 50ամեակը:

Սօս քառօրդ գարէ ի վեր Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութեան վարժարանը հաստատուած է Ռէնսի մէջ: 1948ին ի վեր վարժարանը վերածուած է Լիսէի: Հայ աղջիկները հայեցի բարձր դաստիարակութեան հաւասար՝ Փրանսականն ալ կը ստանան:

Ծրջանաւարտուհիները Փրանսական Կառավարութեան մօտ քննութիւն անցնելով կը ստանան իրենց Բրըվէի կամ Բաշայի աստիճանները:

Ներկայիս վարժարանը ունի 70—80 դիւրօթիկ սանուհիներ Փրանսայէն եւ արտասահմանէն: Աշակերտուհիներու տարիքն է 9—12: Կան լիաթոշակներ, կիսաթոշակներ եւ ձրիավարժներ: Ուսման ծրագիրը կազ-

26 Ընդարձակ Տարեց. 1929, էջ 333—334: — Տօրթ. Վ. Թորգոսեան, Երեւ. Ձէլէպ. Բ., էջ 659:
27 Ընդ. Տարեց. 1932, էջ 294:

մուսուլմանական Լիսեյներու ծրագրի համեմատ: Ֆրանսերէն լեզուի բոլոր ճիւղերուն համար կան ինը ֆրանսացի ուսուցիչներ, որոնք առուուները կ'աւանդեն իրենց դասերը: Իսկ հայերէնի ուսուցման համար ալ կան վեց ուսուցիչներ, որոնցմէ չորսը ֆրանսերէն են. ասոնք ամէն կէսօրէ վերջ կ'աւանդեն հայերէնը իր բոլոր ճիւղերով, այսպէս՝ գրականութիւն, մատենագրութիւն, կրօնք, աշխարհագրութիւն, եւ այլն: Ֆրանսերէն եւ հայերէն լեզուներէ գատ՝ կ'ուսուցուին նաեւ անգլիերէն եւ սպաներէն: Իրրեւ գեղարուեստի ճիւղեր՝ կ'աւանդուին. դաշնակ, երգ, սոլֆեժ, գծագրութիւն, պար, մարզանք եւ ձեռագործ (Կոչնակ, անդ):

1952ին վարժարանի աւագ ուսուցչուհին էր Տիկ. Քարաւէն:

Թէեւ Ընկերութեան 75ամեակը 1954ին է, սակայն վարչութիւնը յարմար տեսած էր 1952—1953ը 75ամեայի Յորեկինական շրջան հրատարակել, որով անցեալ տարի Մայիս 4ին Պարիսի Mutualité թէժ սրահին մէջ տօնուած է Ընկերութեան 75ամեակը եւ այս առթիւ Ընկերութեան եղած է 400,000 Փրանքի նուիրատուութիւն մը²⁸: Յորեկանը տօնուեցաւ նաեւ ուրիշ հայկական շրջանակներու մէջ: Այս առթիւ Ընկերութեան անունը կարգացրինք նաեւ սապէս գրուած. «Դպրոցասէր Տիկնանց Միութիւն», ինչ որ սխալ է: «Դպրոցասէր»ը իր այգբան երկար կեանքին մէջ բնաւ երբեք չէ կոչուած «Միութիւն»: Իր բուն սկզբնական անունն է — «Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութիւն»: Կոչուած է նաեւ «Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւն», ինչպէս որ սկիզբէն ի վեր շեշտեցինք եւ մեր յատկանշութիւններով ապացուցինք:

Յորեկանի առթիւ ուրիշ սխալ մըն ալ նշմարեցինք հայ թերթի մը մէջ. տեղ մը բնուած էր թէ Դպրոցասէրը աւելի առաջ հիմնուած եւ օրինակ եղած է Սիպիլի հիմնած Ընկերութեան: Մինչդեռ իրականութիւնն այն է որ Սիպիլի հիմնած «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»ը 1879 Ապրիլ 11ին հիմնուած է, մինչ «Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութիւն»ը հիմնուած է անկէ քսան օր վերջը՝ 1879 Մայիս 1ին:

1925—1926ին Գահիրէի մէջ կազմուած է Դպրոցասէր Հայուհեաց Մասնաճիւղ մը՝ Դպրոցասէրին նպաստելու նպատակով²⁹:

Դպրոցասէրը 1910ին ունեցած է իր յատուկ Քայլերգը, որուն բառերը գրած է Տիկ. Անայիս, իսկ եղանակը դաշնաւորած Յարութիւն Սինանեան³⁰:

Վերջացնելով «Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութեան» մասին մեր այս ուսումնասիրութիւնը՝ կը փակենք դայն երկու զնահատանքով, մին եղած հայ այրէ մը, միւսը՝ հայ Տիկնիկ մը:

Մնդիր Սիմոնեան կը գրէր 1914ին. «Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւնը իւր վարժուհիներով շրջնէ կառուցուած, հզօր ազդակը, որ տարածեց լոյսը գաւառներուն մէջ, գործեց անգուշանքով, անսպաս ոգով, գիտակ իւր գործին նուիրակամութեան, վստահ իւր ձեռնարկին յաջողութեան՝ անվեհեր զիմեց ազգայնոց նիւթական ձեռնառութեան, տաննեակ փարաներով սկսուած գործ մը, տարեկան հազար հինգհարիւր ոսկւոյ պիւտոնով մը կը ներկայանայ այսօր³¹»:

Հայ Տիկնիկ մը 1951ին կը գրէր. Դպրոցասէրը՝ ծնունդն է «հայ կնոջ կորովի, հեռատեսի եւ ժրջան գործունէութեան». ան կարած անցած է մօտ երեք քառորդ դար՝ «միշտ պատնէշին վրայ կանգնած, յարմարելով օրուան պահանջներուն, հասցնելով գիտակից ու պատրաստուած ուսուցչուհիներ եւ մայրեր, մերթ պատասպարելով, դարմանելով եւ դատարարելով հարիւրաւոր անոք եւ ծնողագուրկ Հայուհիներ³²»:

23. ԱՐՈՒՅՏԱՍԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)
Օրթագիւղի «Արուեստասէր Ընկերութիւն»ը հիմնուած է 1879 Հոկտեմբերին³³: Մասիսի մէջ 1879 Նոյ. 7ին (հ. ա.) կը յիշուի իրրեւ նորակազմ Ընկերութիւն: Ընկերութեան «Վարիչ Ժողով»ը հետեւեալ ծանուցումը կը հրատարակէ հոն.

²⁹ Համարձուցմ երամեան, Յուլիան, Բ., Աղեքաանդրէա 1929, էջ 317:
³⁰ Ժամանակ, 1910, թ. 386:
³¹ Ժամանակ, 1914, թ. 1874:
³² Յատաջ, 1951, թ. 1980:
³³ Գաղ. Տարեգ., Գ., էջ 117:

Կ. Պ. 7—19 Նոյ. 1879

Օրթագիւղ

Ազնիւ Ընկեր.

Նորակազմ Արուեստասէր Ընկերութեան վարիչ Ժողովը պատիւ ունի ծանուցանել որ յատկապէս Կիւրակէ օր 11 Նոյ. Ընկերութեան Ընդհանուր Ժողովը պիտի գումարի յարտաքոյ կարգի նիստ ի Ս. Թարգմանչաց վարժարան ժամը ճիշդ 6ին:

Կը հրաւիրուի Ձեր Ազնուութիւնը իւր ընկերական պարտաւորութիւնը կատարելու փութալ:

Ի Դիմաց Վարիչ Ժողովոյ
Ատենագրուի
Տ. Արքիարեան

Ատենագրուի
Յ. Գուրգէն³⁴

Դժբախտաբար ուրիշ տեղեկութիւն մը չունինք Ընկերութեան մասին: Նոյնանուն ուրիշ 2 Ընկերութիւն ալ կոչ մին Սասնաբլու, միւսը Մամաթիա, որոնցմէ հաւանորէն Սասնաբլուին է, որ 1880ին Մուշի մէջ երկրաշարժի ծածկան վարժարան մը կը բանայ:

24. ՀՈՒՓՍԻՄԵԱՆ ՎԱՐՉԱՐԱՆԻ ՕՐԹՈՂՈՎԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879 ?)

Օրթագիւղի Հոխիսիմեանց վարժարանի տանուհիները կազմած են «Հոխիսիմեան վարժարանի Օրթոլոյս Ընկերութիւն»ը, որ առաջին անգամ 1880 Մարտին հրատարակ կ'ելլէ նուիրատուութեան մ'առթիւ (տե՛ս Թէրեմեմանը էֆէնար, Կ. Պ. 1880, թ. 816): Հաւանորէն իր կազմութիւնը հին չէ: Գուցէ հիմնուած ըլլայ 1879ին:

25. ՀԱՅ ՆԵՐՏԱՍԱՐԳԱՅ ՄԵՌՈՒԹԻՒՆ (1910)

Կազմուած կ'երեւայ 1910ին: Առաջին անգամ անունիս կը հանդիպինք 1910 Դեկտ. 4ին, երբ արդէն Լսարան-Ընթերցարան ունի³⁵: Կը գերակազմուի 1919 Յունուարին³⁶:

26. ԲԱՐՏԵՐԻԱՅ ԼՍԱՐԱՆԱՎԱՆ ՄԵՌՈՒԹԻՒՆ (... 1920)

Թէոդիկ³⁷ առանց ըսելու թէ ե՞րբ կազմուած է Միութիւնն՝ կ'ըսէ որ «Վերակազմուած է 1920 Փետր. 8ին»: Ինչպէս կը տեսնուի սակայն ձուլում մըն է նախկին «Բարենուէր» եւ «Լսարանի» Ընկերութեանց անունը:

³⁴ Մասիս, 1879, թ. 2473:
³⁵ Ժամանակ, 1910, թ. 659:
³⁶ Անդ, 1919, թ. 3426:
³⁷ Ամէնուն Տարեցոյցը, 1921, էջ 301:

ներու՝ նոր ձեւի տակ, կոչուելով «Միութիւն»: Թերեւս կազմուած է 1908էն վերջ: 1920ին կը կոչուի մերթ «Բարենուէր»³⁸ եւ մերթ «Լսարանական Միութիւն»³⁹:

Իր նպատակն է. «Նպաստել երկուս հասարակութեան մտաւոր, բարոյական եւ ֆիզիքական դաստիարակութեան»: Ունէր 54 գիքական դաստիարակութեան: Ունէր 54 անդամ: Վարչական խորհուրդը կը կազմէին. Ս. Արզումանեան, Ա. Շատանեան, Մայր Դիւանը՝ Դոկտ. Ա. Կիւրչեան, Օր. Վ. Մեսրոպեան⁴⁰:

ԲՈՒՐՈՒՉԵՄԷՆ

1. ԱՐՇԱՐՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1812)

Կ. Պոլսոյ Բուրուչեմէ Գիւղը եղած է մշտական բնակավայրը Տիգրանց Գեղարտանին¹, որ կը գտնուէր նաեւ իրենց վերջին հանգստարանը²: Հետեւաբար սխալ չ'ըլլար եթէ Պոլսոյ այդ թաղն համարինք Տիգրաններէ հիմնուած «Արշարունեաց Ընկերութեան» հիմնադրուի:

«Արշարունեաց Ընկերութեան» հիմնադրին է Յովհաննէս Չէլէպի Տիգրան (ծն. 1749 + 1812 Ապրիլ), որուն կենսագրին համարած է «ճշմարիտ գիտութեան փառաքոյ» անձ մ'եղած է եւ «բազմակողմանի ուսմանց եւ երաժշտութեան մէջ ինքն արդէն կրթուած՝ փոյթ տարած է նաեւ իւր ազգայնոց յատկաբար³»:

Յովհաննէս Տիգրան եղած է ազգային մեծ բարերար մը: Ո՛չ միայն նորոգած է Սիլեոտարի եւ ուրիշ թաղային դպրոցներ՝ այլ եւ իր անձնական ծախսով հիմնած է երկու դպրոց. մին Ղալաթիոյ մէջ, միւսը Քարկու դպրոց. իր ծախսով տպագրելու տարածման: Իր ծախսով տպագրելու տարած է մեծահատոր գրքեր, առանց ուրեւում որ իր անունը յիշուի իբրեւ մեկեմաս:

Ահա այս մեծանուն անձնաւորութիւնն է, որ գրքեր տարածելով ազգին յատկաբար իրարացնելու նպատակով 1812ին Պոլսը:

³⁸ Ժողովուրդի Չայքը, 1920, թ. 606:
³⁹ Ժամանակ, 1920, թ. 2764:
⁴⁰ Թէոդիկ, անդ:
¹ Դոկտ. Վ. Թորոյմեան, երեմիա Չէլէպիի Գիւղի մասին, Ստամբուլի Պատմ., Բ., Վիեննա 1932, էջ 688:
² Հ. Գարբէկ Մէնեփէլեան, Ազգարանութիւն Ազնուական Չարմին Տիգրանց, Վիեննա 1890, էջ 10:
³ Հ. Գ. Մէնեփէլեան, անդ, էջ 29:

այ մէջ կը հիմնէ «Արշարունեաց Ընկերութիւնը»⁴: Այս մասին կ'ակնարկէ Բանասէր⁵, գրելով. «... Հոս կը գննուի սրբաբան, բայց սքանչելի հատուած մը, որն որ քառասուն տարի անկէ առաջ նշմարիտ ազգասէրի մը գրածն է, երբ օգտակար գրքեր տպելու Ընկերութիւն մը կը հաստատուի ազգերնուս մէջ... ազնիւ յիշատակ մը ան ազգասէր եւ ուսումնասէր մարդուն, որուն անունը ամէնուն ծանօթ է եւ ամէն յարգութիւն կ'արժէ»:

Իրրեւ գուտ մշակութային Ընկերութիւն՝ կրնայ ըսուիլ որ առաջինն է «Արշարունեաց Ընկերութիւնը» Պոլսահայ Մշակ. Ընկերութիւններու մէջ: Ընկերութեան մէկ ճառարտը, որ «Յ. Տ.» կը ստորագրէ եւ ապահովարար Յակոբ Զէլէպի Տիւզեանն է՝ կ'ընդգծէ առաջնութեան պարագան, ըսելով. «Ընկերութիւն այսպիսի կարծեմ թէ ոչ երբեք եղեր էր մեր ազգին մէջը»⁶:

«Դիտակ Բիւզանդեան» խմբագրութիւնն ալ կը շեշտէ «Արշարունեաց» անդամակցութիւնը՝ պատմելով նոյն Ընկերութեան հիմնադրութիւնը. «Մեր ազգին մէջ հոգեւոր գովելի եղբայրութիւններ եղաւ, բայց Ընկերութիւն մը չի կար. աս թիւ: զարուն սկիզբը տեսնուեցաւ Ստանպուլի մէջ մէկ նախանձելի Ընկերութիւն մը՝ որ մէյնի խօսք դրած են, որ ձեռնարկէն եկածին չափ ջանք ընեն, ստակ՝ խարս չիւնային, որչափ պէտք ըլլայ տան, որ եղած ուսումնական գրքերուն վրայ, տանա այլ նարանք գրքեր շինել տան գիտնոց, ու տպել տան, որով որ ազգը պարէ ան շատէն քիչը կարգայ սորվի, խմատութեան անոյճ համը առնէ»⁷:

Բանասէր⁸ բացայայտօրէն կը գրէ. «Առջի ուսումնական Ընկերութիւնը կը սեպեցի անկիւնայ որ հաստատուեցաւ ի Կաստանդուպոլիս յամին 1812 եւ որուն նպատակն էր օգտակար գրեանք հրատարակել»:

Ընկերութեան հիմնումի մէջ գործօն դեր ունեցած են երկու երիտասարդ Տիւզեաններ եւս — Յակոբ եւ Մկրտիչ Զէլէպիները⁹:

⁴ Անդ, էջ 21:
⁵ Բանասէր, Կ. Պ. 1851, Թ. 4, էջ 161:
⁶ Գիտակ Բիւզանդեան, Վենետիկ 1813 Յունուար, Թ. 1, էջ 8:
⁷ Անդ, էջ 6:
⁸ Անդ, Թ. 12, էջ 547—548:
⁹ Ազգասէր, Վենետիկ 1815, էջ 4:

Առաջին տարին Ընկերութիւնը ունեցած է 40—45 անդամ: Գիտակ Բիւզանդեան¹⁰ կը հաւատալ որ օրէօր կ'աճի այդ թիւը եւ մեծ յոյս կայ որ հաստատ մնայ ու տեւէ:

Ընկերութիւնը 1813ին Յայտարարութիւն մը հրատարակելով՝ կը բացատրէ ազգին լուսաւորութեան համար անհրաժեշտ պէտքը գրքեր տպագրելով տարածելու եւ ընթերցումը քաջալերելու: Ատկէ կ'իմանանք որ ամէն անգամ իրաւունք ունի տպագրուած գրքերէն օրինակ մը ստանալու: Հոգ կ'ըսուի նաեւ որ Ընկերութեան անդամագրութեան մէջ երեք կարգեր կը գանազանուին՝ վճարումի տարբերութիւններով: «Յայտարարութիւնը» կ'ըսէ. «... մտածեցին երեք կարգ գնել աւ Ընկերութեան մէջ, որ ծանրութիւն մը չըլլայ. ուգորդ ան կարգը ընտրէ, որը իր կարողութեանը ձեռք կու տայ»:

Ընկերութիւնը չափազանց օգտակար եղած է Հայութեան համար: Ան ստանձնած է Դիտակ Բիւզանդեան երկշարժաթերթի ամբողջ ծախքը՝ խմբագրութիւնը յանձնելով Վենետիկի Միսիթարեանց¹¹: Յետոյ տպագրելով Ազգասէրը եւ ուրիշ գրքեր¹²: 1815էն վերջ իր վրայ առեւ է նաեւ Վենետիկի Միսիթարեանց Եղանակ Բիւզանդեան տարեթերթին ծախքը¹³:

Հակասակ իր կարծատեւ դոյութեան՝ Արշարունեաց Ընկերութիւնը մեծ ծառայութիւն մատուցած է Հայ Մշակոյթին, ոչ միայն գրքերու եւ թերթերու տպագրութեամբ, այլ եւ օրինակ հանդիսանալով Հայութեան՝ մշակութային գեանի վրայ հաւաքական աշխատանքի ու միութենական գործունէութեան: Իր օրինակը վարակիչ եղած է յաջորդ սերունդներու համար ու ետեւէ ետեւ ծիլ արձակած են գանազան տեղեր, այլեւայլ Ընկերութիւններ:

Արշարունեաց Ընկերութիւնը տեւած է, հաւանօրէն, մինչեւ 1819: Բանասէր գոհացած է 1851ին լոկ սա տողով. «Շատ չիբժեց սակայն աւ Ընկերութիւնը»¹⁴:

¹⁰ Անդ, էջ 6:
¹¹ Հ. Գրիգորիս Գալէփթարեան, Պատմութիւն Հայ լրագրութեան, Վիեննա 1893, էջ 30—31:
¹² Բանասէր, անդ, էջ 549:
¹³ Հ. Գ. Գալէփթարեան, անդ, էջ 28:
¹⁴ Անդ, էջ 548: — Հմմտ. Յանաջ, Փարիզ 1950, Թ. 1563:

2. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1863)

1866 Սեպտ. 13ին յօդուածագիր մը Բուրուչէճէնի ժամանակին կը գրէ. «Բուրուչէճէնի վարժարանին այժմեան բարեկարգ ընթացքը, որ եռամեայ յարստեւութեան արդիւնքն է, նոյն Գիւղի Թարգմանչաց Ընկերութեան շնորհիւն է: Ի սկզբան, ինչպէս սովորութիւն է, իւրաքանչիւր անգամ իր ամսական տուրքը սերով կը վճարէր, որով մեծ դիւրութիւն մ'ըլլալէն զատ վարժարանին ամսական ծախսըը համար՝ ամէն տարի փոքրիկ դրամագլուխ մըն ալ պիտի կրնար աւելնալ: Սակայն քիչ ժամանակ անցնելէն ետքը Ընկերութեան անդամոց մեծ մասը գաղթեցուցին իրենց տուրքը եւ մնացին միայն Գասպար աղա, որ կը վճարէ 200 դր.: Գէորգ աղա՝ 50 դր.: Քերովրէ աղա՝ 50 դր.: Գարրիէլ աղա՝ 30 դր.: Յարութիւն աղա՝ 30 դր.: Ստեփան աղա՝ 30 դր.: Եղիա աղա՝ 30 դր.: Մարտիրոս աղա՝ 20 դր.: Գրեգոր աղա՝ 10 դր.: Այս ազգասէր անձանց մէջ միայն երեք հոգի են որ զուակ ունին վարժարանին մէջ: Վարժարանը իրեն համար եկամուտ տուն մը եւ սրճարան մ'ունի, որոնք 500 դրուշ կը բերեն ամիսը, 400 դրուշ ալ վերայիշեալ Ընկերութեան անդամոց կողմանէ կը վճարուի. ընդամենը 950 դրուշ կ'ընէ եւ վարժարանին ծախքն ալ ըսուշ կ'ընէ Կ. Պ. 1866, էջ 156: — ժամանակ (1864, էջ 147), 1864ին կը գրէր թէ «բարեկարգութեամբ կ'ընթացայ, ձեռնադրութեամբ Ընկերութեան մը, որ պատուարժան Գիւղացիներէ կը բաղկանայ»:

2. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ (Շարունակելի:)

¹⁵ Ժամանակ, Կ. Պ. 1866, էջ 156: — ժամանակ (1864, էջ 147), 1864ին կը գրէր թէ «բարեկարգութեամբ կ'ընթացայ, ձեռնադրութեամբ Ընկերութեան մը, որ պատուարժան Գիւղացիներէ կը բաղկանայ»:

J. GRIBOMONT, O. S. B., Histoire du texte des Ascétiques de S. Basile. Louvain 1953, 8^o, p. XIX—348 [Bibliothèque du Muséon, vol. 32].

W. DIESEN, Les recueils manuscrits arméniens de saint Basile. Extrait du Muséon, 66 (1953, Louvain), 65—95.

Կեսարիոյ Մեծ Հայրապետին, Ս. Բարսեղի գործերուն քննական հրատարակութեան համար կարեւոր էր նախ ուսումնասիրել մէկն իր գրուածքին բնագիրը, թէ ինչպէս աւանդուած է այն մեզի ձեռագիրներու եւ օտարագրութեան թարգմանութիւններու մէջ: Այս նախապատրաստական աշխատութեան նուիրուած են երկու հրատարակութիւններ:

J. Gribomont կու տայ Ս. Բարսեղի Ասկետիկոնի բնագիրն պատմութիւնը: Ան աչքի տեսած է 150 ձեռագիր յոյն սկզբնագրի եւ անոր թարգմանութիւններու՝ հայերէնի, վրացերէնի, սլաւերէնի, ասորերէնի, արաբերէնի եւ լատիներէնի: Յաջորդած է գասաւորել գանձնք գանազանելով վեց խումբ. Հասարակաց, Ստուգիտեան, Նեղոսեան, Արեւելեան, Կնատեաց եւ Բայբերեան օրինակ: Յոյն ձեռագիրներուն հնագոյնն է Թ. դարէն. թարգմանութիւններու մէջ առաջին տեղը կը զբաղէ ասորին, ապա Ռուսիայի լատիներէնն եւ հայերէնը: Բնագրափնտրի լատիներէնն եւ հայերէնը կը հաջորդեն տեսակէտ կարեւորագոյնը կը հաջորդեն հայերէնը, որ կ'ենթադրէ հին բնագրութիւնը, որ շատ մօտ է Ստուգիտեան խումբին, տեղ տեղ նաեւ Նեղոսեանի: Հայ թարգմանութեան յոյն սկզբնագրին ներկայացուցիչը կը նկատուի Աթէնքի Ազգային Մատենադարանի Թ. 223 ձեռագիրը, որ պահուած է մեզի հասանելիութեանը միայն (էջ 71—73):

Հայերէն թարգմանութիւնը քննութեան արժանուած է էջ 65—77: Հեղինակը իր տրամագրութեան տակ ունեցած է Հոմի Bibliotheca Casanatense Թ. 2053 հայերէն ձեռագիրը՝ լուսանկարով: Ձեռագիրս գրուած է 1625ին Մոկաց աշխարհի (Վասպուրականի) Սուրբ Գիւղին մէջ, գրուած է իմ կողմէ վառահօր Ստեփանոս Շատարեանց խնդրանքով: Ձեռագիրը կը պարունակէ նաեւ Առաքինութեանց գիրքը, որուն հեղինակն է Պետրոս Արագոնացի Գոմիտիկեանը, թարգմանուած լատիներէնէ 1339ին, ուստի պէտք չէ շփոթել գիրքը համանուն եւ համաբաղաբայի Արագոնացի հետ, որ վախճանած է 1584ին